



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 փետրվարի 2024 թվական

ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահի պաշտոնակատար Արման Թովմասյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/10062/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 9-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Օժեն Կոչկարյանը 2023 թվականի դեկտեմբերի 4-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ նոտարական պալատի՝ քաղաք Երևան, Շուրխովի (ներկայիս՝ 2-րդ Աղյուսագործների) թիվ 55 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի վերաբերյալ «Երևան առաջին պետական նոտարական տարածքի» պետական նոտար Ե.Սարգսյանի կողմից 1997 թվականի օգոստոսի 26-ին Ավետիս Սարգսի Կոչկարյանին թիվ 5-2982 ըստ օրենքի

ժառանգության իրավունքի վկայագիր տալու նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ՝ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ տարածքային ստորաբաժանման իրավունքների պետական գրանցման միասնական 44-17 մատյանի 000221 համարի տակ քաղաք Երևան, Շոլոխովի (ներկայիս՝ 2-րդ Աղյուսագործների) թիվ 55 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի վերաբերյալ Ավետիս Սարգսի Կոշկարյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 18-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի փետրվարի 14-ին:

Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին, 81-րդ հոդվածին, 220-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի հունվարի 18-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) *Տվյալ դեպքում, հայցվորը, որպես հիմնական պահանջ, խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել ք. Երևան, Շոլոխովի (ներկայիս 2-րդ Աղյուսագործների) թիվ 55 հասցեում գտնվող բնակելի տան և*

յրնամերձ հողամասի վերաբերյալ «Երևան առաջին պետական նորարական փարածքի» պետական նորարար Ե. Մարգարյանի կողմից 1997 թվականի օգոստոսի 26-ին Ավերիս Մարգարի Կոչկարյանին թիվ 5-2982 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր փախու նորարական գործողությունը: Մինչդեռ, հայցադիմումի ուսումնասիրությունից պարզվել է, որ հայցվորի փաստարկները, ըստ էության, վերաբերում են հայցվորի կողմից ժառանգությունն ընդունելու իրավունքին և ժառանգության իրավունքի վկայագրի իրավաչափությանը, այսինքն՝ վեճը չի կրում հանրային բնույթ, այլ բխում է մասնավոր քաղաքացիաիրավական՝ ժառանգական իրավահարաբերություններից:

Ամբողջ վերոնշյալի հաշվառմամբ՝ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ սույն հայցը ընդդարյալ չէ ՀՀ վարչական դատարանին, և սույն գործով հայցադիմումը ենթակա է վերահասցեագրման ըստ ընդդարյության՝ Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին»¹:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՌ-787 որոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱԲԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14, 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 և 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական

¹ Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 106-108:

դատարանը 2024 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. «(...) *Սույն դեպքում Հայցվորը նշել է, որ նույնպես, չունենալով հարգելի պարճատով ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը երկարացնելու մասին դատարանի կողմից կայացված ակտ կամ ժառանգությունն ընդունած ժառանգ Հայցվորի կողմից գրավոր ձևակերպված համաձայնություն, դուրս գալով իր իրավասության սահմաններից, անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պայմաններում և պարզաճ չպարզելով ժառանգության զանգվածի կազմը, ժառանգության իրավունքի վկայագիր է տվել գործով երրորդ անձին:*

Հայցադիմումի ուսումնասիրությունից հետևում է, որ Հայցվորը վիճարկում է նույնպես գործողությունները, որոնց արդյունքում տրվել է ժառանգության վկայագիր, որը տվյալ պարագայում որպես հանրային իրավահարաբերության կողմ հանդիսացող անձի գործողությունների կատարման վիճարկում է և ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Այն, որ ժառանգական զանգվածի պարկանելիության վերաբերյալ վեճ առկա չէ, հաստատվում է նաև հայցադիմումով Հայցվորի կողմից ժառանգներին որպես պարասխանողներ չներգրավելու փաստով:

Եշված համակարգային վերլուծությունների արդյունքում հաստատված փաստերի առկայության պայմաններում գրնում եմ, որ սույն հայցադիմումով ներկայացված հիմնական պահանջը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը»²:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության*

² Տե՛ս դատական գործը, հատոր 3-րդ, թերթեր 9-12:

քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/10062/05/23 գործն ըստ հայցի՝ Օժեն Կոչկարյանի ընդդեմ ՀՀ նորարական պալատի, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին արջանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մասնագիտացված դատարաններն են՝

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին արջանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:

Նշված օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին արջանի դատարանում, բացառությամբ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը

Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

(...)

5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների նախագահները, (...) գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և համապատասխանաբար վարչական կամ հսկակոռուպցիոն պալատների նախագահների մասնակցությամբ: Նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք: Որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

7. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Առաջին արյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանին ընդդարյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:

Նույն օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Վարչական դատարանին ընդդարյա են՝ նորարական գործողության կամ նորարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը »:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նույսն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (...), նույն օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (...) հիման վրա»:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «Նույսն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է նույն օրենքով նախատեսված նույսական գործողություններ և ծառայություններ: Նույսի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են միայն նույն օրենքով:

Նույսը նույսական գործողություններ իրականացնում է փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր տրամադրելու կամ օրենքով նախատեսված այլ գործողություններ կատարելու միջոցով: (...) »:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձը, որի շահերը շոշափում է նույսի գործողությունը կամ անձը, որին մերժվել է նույսական գործողություն կատարելը, կարող է կատարված նույսական գործողությունը կամ նույսական գործողության կատարումը մերժելը բողոքարկել դատարան»:

Նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Նույսն իրականացնում է հետևյալ նույսական գործողությունները. (...) տալիս է ժառանգության իրավունքի վկայագրեր»:

Ժառանգության իրավունքի վկայագիրը դատական կարգով վիճարկելու առանձնահատկություններին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձ է կատարել Սերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նույսական փարսածքի նույսը Էմմա Շաբոյանի, երրորդ անձ Սյրյուպիկ Պողոսյան վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. «(...) ժառանգության

իրավունքի վկայագիր փրամադրելիս նույնպես իրականացնում է հանրային գործառույթ, քանի որ ժառանգության իրավունքի վկայագրի փրամադրումը մերժելիս նույնպես և քաղաքացու միջև առկա են ոչ թե կոորդինացիոն (համադասություն) բնույթի, այլ սուբորդինացիոն (ենթակայություն) բնույթի իրավահարաբերություններ: Սույն իրավահարաբերություններում քաղաքացին և նույնպես հանդես չեն գալիս որպես մասնավոր իրավահարաբերությունների հավասար սուբյեկտներ: Եման իրավահարաբերություններում նույնպես օժտված չէ կամքի ազատությամբ, այլ հանդես է գալիս որպես հանրային իրավահարաբերությունների սուբյեկտ, որտեղ իրավահարաբերության մասնակիցներից մեկը, միակողմանի հիմնվելով իրավական կարգավորումների վրա, իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում է կայացնում:

(...) Ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջը չի կարող դիրարկվել նաև որպես նույնական գործողությունը վիճարկելու պահանջ, եթե ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված չէ նույնական գործողությունների վիճարկումը:

(...) նույնպես ժառանգության իրավունքի վկայագիր փրամադրելիս իրականացնում է հանրային գործառույթ, սակայն միաժամանակ օժտված չէ պետական մարմնի կարգավիճակով, այսինքն՝ նույնպես ՀՀ իրավական համակարգում ոչ ինստիտուցիոնալ, ոչ գործառույթային առումով վարչական մարմին չէ, և երկրորդ՝ ժառանգության իրավունքի վկայագիրը փրվում է մասնավոր իրավունքի, մասնավորապես՝ ժառանգական իրավունքի կոնկրետ հարցի կարգավորման կապակցությամբ՝ ի փարբերություն վարչական ակտի, որն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում»³:

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճարել դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել «Վեստ»

³ Տե՛ս ՀՀ Վճարել դատարանի՝ Սերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նույնական փարածքի նույնպես Էմմա Շարոյանի, երրորդ անձ Սյրյուպիկ Պողոսյան վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11 որոշումը:

ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մերավոր սեփականության գործակալության վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. «(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից փարանշարվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ փարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հարկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք փարրերի համակցությամբ: (...) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (...)»⁴:

10. Սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն

⁴ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ «Վեսար» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մերավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԳ/0830/05/14 որոշումը:

ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Ընդ որում, իրավահարաբերությունը որպես հանրային որակելու համար անհրաժեշտ է, առաջին հերթին, բացահայտել իրավահարաբերության տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը:

Հանրային իրավահարաբերությունների շարքում օրենսդիրը, ի թիվս այլ գործերի, դիտարկել է նաև նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ վեճերը, որոնց՝ հանրային իրավահարաբերություններից բխելու փաստը պարզելիս, դատարանը նախ պետք է բացահայտի, թե արդյոք քննության ենթակա վեճի հիմքում հայցվորի կողմից դրվել է նոտարական գործողությունների վիճարկումը, թե այն ծագել է մասնավոր իրավահարաբերությունից բխող կոնկրետ հարցի կարգավորման կապակցությամբ:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Օժեն Կոշկարյանը 2023 թվականի դեկտեմբերի 4-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ նոտարական պալատի՝ քաղաք Երևան, Շուրխովի (ներկայիս՝ 2-րդ Աղյուսագործների) թիվ 55 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի վերաբերյալ «Երևան առաջին պետական նոտարական տարածքի» պետական նոտար Ե. Սարգսյանի կողմից 1997 թվականի օգոստոսի 26-ին Ավետիս Սարգսի Կոշկարյանին թիվ 5-2982 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տալու նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ՝ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ տարածքային ստորաբաժանման իրավունքների պետական գրանցման միասնական 44-17 մատյանի 000221 համարի տակ քաղաք Երևան, Շուրխովի

(ներկայիս՝ 2-րդ Ադյուսագործների) թիվ 55 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի վերաբերյալ Ավետիս Սարգսի Կոշկարյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին⁵,

- վերոնշյալ գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 18-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ հայցվորը, որպես հիմնական պահանջ, խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել ք. Երևան, Շոխիսովի (ներկայիս 2-րդ Ադյուսագործների) թիվ 55 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի վերաբերյալ «Երևան առաջին պետական նոտարական տարածքի» պետական նոտար Ե.Սարգսյանի կողմից 1997 թվականի օգոստոսի 26-ին Ավետիս Սարգսի Կոշկարյանին թիվ 5-2982 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տալու նոտարական գործողությունը: Մինչդեռ, հայցադիմումի ուսումնասիրությունից պարզվել է, որ հայցվորի փաստարկները, ըստ էության, վերաբերում են հայցվորի կողմից ժառանգությունն ընդունելու իրավունքին և ժառանգության իրավունքի վկայագրի իրավաչափությանը, այսինքն՝ վեճը չի կրում հանրային բնույթ, այլ բխում է մասնավոր քաղաքացիաիրավական՝ ժառանգական իրավահարաբերություններից⁶,

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ հայցվորը վիճարկում է նոտարական գործողությունները, որոնց արդյունքում տրվել է ժառանգության վկայագիր, որը տվյալ պարագայում որպես հանրային իրավահարաբերության կողմ հանդիսացող անձի գործողությունների կատարման վիճարկում է և ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով⁷:

⁵ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

⁶ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ Օժեն Կոշկարյանի հայցի առարկան՝ քաղաք Երևան, Շոլոխովի (ներկայիս՝ 2-րդ Աղյուսագործների) թիվ 55 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի վերաբերյալ «Երևան առաջին պետական նոտարական տարածքի» պետական նոտար Ե.Սարգսյանի կողմից 1997 թվականի օգոստոսի 26-ին Ավետիս Սարգսի Կոշկարյանին թիվ 5-2982 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տալու նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջն է, այսինքն՝ նոտարի գործողության վիճարկումը, իսկ հայցի հիմքը՝ առանց ժառանգության զանգվածի կազմը պարզելու և առանց համապատասխան փաստաթղթերի՝ նոտարի կողմից իր իրավասությունների շրջանակից դուրս գալու հանգամանքը: Այսինքն՝ սույն գործով պահանջի հիմքը ոչ թե անմիջականորեն ժառանգման իրավահարաբերություններից բխող, ժառանգությունն ընդունելու կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճն է, այլ՝ նոտարի գործողությունների վիճարկումը, հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

13. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/10062/05/23 գործն ըստ հայցի՝ Օժեն Կոշկարյանի ընդդեմ ՀՀ նոտարական պալատի, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

Ուստի, Օժեն Կոշկարյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/10062/05/23 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/10062/05/23 գործն ըստ հայցի՝ Օժեն Կոշկարյանի ընդդեմ ՀՀ նոտարական պալատի՝ քաղաք Երևան, Շուրխովի (սերկայիս՝ 2-րդ Աղյուսագործների) թիվ 55 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի վերաբերյալ «Երևան առաջին պետական նոտարական տարածքի» պետական նոտար Ե. Սարգսյանի կողմից 1997 թվականի օգոստոսի 26-ին Ավետիս Սարգսի Կոշկարյանին թիվ 5-2982 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տալու նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանքների վերացման անանցյալ պահանջ՝ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ տարածքային ստորաբաժանման իրավունքների պետական գրանցման միասնական 44-17 մատյանի 000221 համարի տակ քաղաք Երևան, Շուրխովի (սերկայիս՝ 2-րդ Աղյուսագործների) թիվ 55 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի վերաբերյալ Ավետիս Սարգսի Կոշկարյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ-
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԱՐՄԱՆ
ԹՈՎՄԱՍՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈՒՅԱՆ**